ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 140-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Գագիկ Արշալույսի Ռամազյանի՝ 28.03.2024թ. թիվ 163/ դիմումը՝
Որոշում եմ.

1.Բավարարել Գագիկ Արշալույսի Ռամազյանի դիմումը և համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող /վկ. 1326858 տրված 30.06.2004թ./ հողամասում կառուցված գոմի քանդման աշխատանքների կատարման համար տալ քանդման թույլտվություն:

2. Աշխատակազմի քաղաքաշինության ոլորտի մասնագետին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Համայնքապետարանի բյուջե վճարել 5000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 141-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով ,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 18.12.2023թ.թիվ 122 դրական եզրակացությունը և Թումանյան համայնքի ավագանու 22.02.2024թ. թիվ 16-Ա որոշումը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքիԴսեղ գյուղում համայնքային սեփականության հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0196-0008 կադաստրային ծածկագրով 0.12039 հա, 06-035-0196-0010 կադաստրային ծածկագրով 0.05841 հա (ըստ գործող կադաստրային քարտեզի՝ 06-035-0196-0016-ից՝ 0.05604 հա 06-035-0196-0017-ից 0.00237 հա),06-035-0196-0013 կադաստրային ծածկագրով 0.02819 հա և 06-035-0633-0001 կադաստրային ծածկագրով 0.17502 հա այլ հողատեսքեր փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող Լոռու մարզ Թումանյան համայնք գյուղ Դսեղ բնակավայրերի հողերի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ 06-035-0196-0008 կադաստրային ծածկագրով 0.12039 հա, 06-035-0196-0010 կադաստրային ծածկագրով 0.05841 հա (ըստ գործող կադաստրային քարտեզի ՝ 06-035-0196-0016-ից՝ 0.05604 հա 06-035-0196-0017-ից 0.00237 հա), 06-035-0196-0013 կադաստրային ծածկագրով 0.02819 հա և 06-035-0633-0001 կադաստրային ծածկագրով 0.17502 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Դսեղ,61-րդ 3/1 հողամաս) հասցե:
3.Սույն որոշում ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Նշված հողամասերն ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման,կապի ցանցեր,գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիրսերվիտուտ պահանջելու իրավունք:Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը և փոփոխված նշանակությամբ համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական

նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

5. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 142-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Ռոման Սուրենի Գաբոյանի դիմումը,և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում գտնվող 06-035-0002-0020 կադաստրային ծածկագրի գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ Դսեղ, 12-րդ փողոց, 11 բնակելի տուն:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 143-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴՍԵՂ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-035-0135-0083 ԾԱԾԿԱԳՐԻ 0.36248 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՐՄԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետերի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 13-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2024 թվականի ապրիլի 2-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 15 արձանագրությունը, ըստ որի 2024 թվականի ապրիլի 2-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղում գտնվող 06-035-0135-0083 կադաստրային ծածկագրի 0.36248 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Արման Գառնիկի Հովսեփյանը՝
Որոշում եմ.

1. ՀՀ,Լոռու մարզի, Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0135-0083 կադաստրային ծածկագրի 0.36248 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասը,որն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, օտարել Արման Գառնիկի Հովսեփյանին ՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 420000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ վճարել համայնքապետարանի բյուջեի N 900265129222 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 3
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
03 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 144-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2024թ. մարտի 22-ի N 25-Ա, 26-Ա որոշումները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշումը՝
Որոշում եմ.

1. 2024 թվականի մայիսի 7-ին ժամը 11^{00}-ին հայտարարել Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի աճուրդ-վաճառք 2 լոտով:
Լոտ 1. 06-035-0130-0021 կադաստրային ծածկագրի 0,0363 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գին սահմանել 435000 ՀՀ դրամ:
Լոտ 2. 06-035-0130-0090 կադաստրային ծածկագրի 0,0384 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գին սահմանել 460800 ՀՀ դրամ:
2. Հողամասերի աճուրդի նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ: Նշված հողամասերի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան:
Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Հայտերն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանում երկուշաբթիից-ուրբաթ, ժամը՝ 09^{00}ից մինչև 18^{00}:
Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:
3. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև անշարժ գույքերի օտարման դեպքում չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն

խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4.Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների աճուրդային և մրցույթային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Առավոտ» օրաթերթում,հրապարակային ն ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում ինչպես նաև հայտարարությունը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 145-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-004-0016-0001 ԾԱԾԿԱԳՐԻ 0.040974 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՐԱ ԼԵՎՈՆԻ ԶԱՎԱՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետերի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 12-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2024 թվականի ապրիլի 2-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացողհողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 14 արձանագրությունը, ըստ որի 2024 թվականի ապրիլի 2-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքում գտնվող 06-004-0016-0001 կադաստրային ծածկագրի 0.040974 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասըսակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Արա Լևոնի Զավարյանը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0016-0001 կադաստրային ծածկագրի 0.040974 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը,որն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,օտարել Արա Լևոնի Զավարյանին՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 520000 (հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265123274 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 04
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 146-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՍՈՒՐԵՆ,ԺԱՆՆԱ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի ղեկավարին է դիմել Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական փողոց, շ.2, բնակարան 3 հասցեի բնակիչ՝ Արմեն Սուրենի Դարբինյանը իր երեխաների՝ Սուրեն Արմենի Մելքոնյանի /ծն.21.09.2006թ./, Ժաննա Արմենի Մելքոնյանի /ծն.08.02.2008թ./,Սարգիս Արմենի Մելքոնյանի /ծն.18.03.2010թ./ նկատմամբ հոգաբարձու սահմանելու խնդրանքով, Թումանյան քաղաքի բնակիչ՝ Արմեն Սուրենի Դարբինյանը և Թումանյան քաղաքի բնակչուհի, հանգուցյալ՝ Աիդա Սամվելի Մելքոնյանը 2005 թվականի սեպտեմբեր ամսից գտնվել են փաստացի ամուսնության մեջ,մինչև Աիդա Մելքոնյանի մահը /2024թ.փետրվարի 20/, բնակվել են համատեղ, նրանց ամուսնությունը ՀԱԳՍ-ում գրանցված չի եղել,ունեցել են չորս երեխա՝ Սուրեն Արմենի Մելքոնյանը /ծն.21.09.2006թ./, Ժաննա Արմենի Մելքոնյանը /ծն.08.02.2008թ./,Սարգիս Արմենի Մելքոնյանը /ծն.18.03.2010թ./ և Ժասմին Արմենի Դարբինյանը /ծն.17.07.2012թ./,Ա.Դարբինյանը երեխաներից միայն Ժասմին Արմենի Դարբինյանի /ծն.17.07.2012թ./ հայրությունն է ճանաչել.
Հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 04.04.2024թ. նիստի որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ Ընտանեկան Օրենսգրքի 35 հոդվածով,ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝
Որոշում եմ.

1.Անչափահասներ՝ Սուրեն Արմենի Մելքոնյանի /ծն.21.09.2006թ. ծննդ. վկայական՝ ԱԱ N 135648 տրված 20.11.2006թ./ և Ժաննա Արմենի Մելքոնյանի /ծն.08.02.2008թ ծննդ. վկայական՝. ԱԱ N 212137 տրված 13.02.2008թ./ և Սարգիս Արմենի Մելքոնյանի /ծն.18.03.2010թ. ծննդ. վկայական՝ ԱԲ N 053318 տրված 19.03.2010թ./ նկատմամբ հոգաբարձու նշանակել չափահաս, գործունակ քաղաքացի Արմեն Սուրենի Դարբինյանին /ն/ք՝ 010013365, տրված 26.02.2024թ., 055-ի կողմից/:

2. Արմեն Դարբինյանին իրավունք վերապահել տնօրինելու անչափահասներ՝ Սուրեն, Ժաննա և Սարգիս Արմենի Մելքոնյանների դրամական միջոցները (կենսաթոշակ,ընտանեկան նպաստ և այլն):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 04
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 147-Ա

ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԵԳԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ (ՕԳՆԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մար մինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի <<Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի>> 2024թ. ապրիլի 04-ի նիստի որոշումը և Դսեղ գյուղի բնակիչ Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանի դիմումը՝

Որոշում եմ.

Դսեղ գյուղի բնակիչ Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանի խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները, իր համաձայնությամբ նրա նկատմամբ Համլետ Վոլոդյայի Եգանյանին նշանակել օգնական (պատրոն):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 24 թ. ապրիլի 04
ք.Թումանյան